ՎԴ/8260/05/26
(ԵԴ2/6201/02/26)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

7 հուլիսի 2026 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին փոխարինող Արսեն Մկրտչյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/8260/05/26 (ԵԴ2/6201/02/26) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 15-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Հ.Ս.-ը, 2026 թվականի մայիսի 20-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և ՀՀ կադաստրի կոմիտեի՝ 2025 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը

և որպես հետևանք՝ 2025 թվականի դեկտեմբերի 23-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին[1]:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի մայիսի 27-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին[2]:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 15-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան[3]:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունիսի 29-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2026 թվականի մայիսի 27-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանն արձանագրում է, որ հիմնական հայցապահանջը՝ 2025 թվականի դեկտեմբերի 09-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին պահանջը, ընդհատյա չէ վարչական դատարանին, քանի որ առուվաճառքի պայմանագիրը, նույնիսկ եթե դրա կողմերից մեկը հանդես գա հանրային իշխանության մարմին, ենթադրում է քաղաքացիաիրավական հարաբերություն, քանի որ հանրային իշխանության մարմինը նույնպես կարող է հանդես գալ քաղաքացիաիրավական հարաբերություններում և կնքել*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 1-14:
[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 38-48:
[3] Տե՛ս դատական գործը, թերթեր 55-57:

քաղաքացիաիրավական պայմանագրեր: Տվյալ դեպքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և գնորդի միջև եղել է ազատ կամահայտնություն, ինչը բացառվում է հանրային իրավահարաբերություններում»[4]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 66-րդ հոդվածի 1-ին մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 4-րդ հոդվածին, 35.1-ին հոդվածի 1-ին մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի հունիսի 15-ի որոշմամբ գտել է, որ հայցադիմումով ներկայացված հիմնական պահանջը վերապահված է քննության ՀՀ վարչական դատարանին՝ նշելով հետևյալը. *«(...) Տվյալ դեպքում Հ.Ս.-ը, դիմելով դատարան, թեև խնդրել է անվավեր ճանաչել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և կիրառել անվավերության հետևանքներ, սակայն ներկայացված հայցադիմումով որպես իրավական հիմք վկայակոչել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 63-րդ, 66-րդ հոդվածները, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 35.2-րդ հոդվածները և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, իսկ հայցի փաստական հիմքում վկայակոչել է այն հանգամանքները, որ ինքը չի ծանուցվել աճուրդի, լոտի մեկնարկային գնի և վիճարկվող պայմանագրի մասին, ծանուցումը չի հրապարակվել զանգվածային լրատվության միջոցով և «www.azdarar.am» ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքով, ինչպես նաև «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը չի ստացել, բացի այդ, լոտի մեկնարկային գին է նշանակվել գույքի շուկայական արժեքի 75 տոկոսից անհամեմատ ցածր արժեք և պարտապանի միակ բնակարանի արժեքից ցածր արժեքով է վաճառվել:*

(...)

[4] Տե՛ս դատական գործը, թերթեր 38-48:

Դատարանն արձանագրում է, որ ներկայացված պահանջի փաստական հիմքերն ըստ էության վերաբերում են հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման իրավաչափության հարցին, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ վեճը վերաբերում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ որպես վարչական մարմնի հանրային իշխանական լիազորությունների իրականացմանը և բխում է հանրային իրավահարաբերություններից, այսինքն՝ հայցվորն ըստ էության ներկայացրել է ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վիճարկման հայց, ուստի վերը նշվածի հիմքով՝ գտնում եմ, որ թիվ ԵԴ2/6201/02/26 գործի ենթակայության հարցը որոշելու նպատակով այն պետք է ուղարկել Վճռաբեկ դատարան»[5]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *իրավաչափ է արդյո՞ք ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/8260/05/26 (ԵԴ2/6201/02/26) գործի վերահասցեագրումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ սույն գործի իրավահարաբերության բնույթը պարզված չլինելու պայմաններում:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

[5] Տե՛ս դատական գործը, թերթեր 55-57:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մասնակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (…) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(…)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

*10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն

պարտաոաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...)»:*

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 35.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի (այսուհետ՝ համակարգ) կիրառմամբ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի (...) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ծառայությունը՝ կատարողական թերթին, ինչպես նաև նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան»:*

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Եթե սակարկություններով վաճառվելիք լուրն անշարժ կամ շարժական գույք է, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, ապա սակարկություններում հաղթողի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան լուրի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը»:*

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *«Լուրի (լուրերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը, և վերյալ լուրի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված»:*

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 33-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Աճուրդում հաղթած մասնակցի կողմից գնման գինը ծառայության ստորաբաժանման դրամարկղ կամ դեպոզիտ հաշվին մուծելուց հետո՝ եոթոյա ժամկետում, հարկադիր կատարողը նրա հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր»:*

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»*[6]:

9.1. Հարկադիր էլեկտրոնային աճուրդի դատական կարգով վիճարկման առանձնահատկություններին անդրադարձ է կատարվել Վճռաբեկ դատարանի՝ *Դեզդեմոնա, Էդիկ, Գոհար, Ստեփան, Նունե, Հմայակ և Ալիսա Մանուկյաններն, Անահիտ Հարությունյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Մամիկոն Օհանյանի՝ քաղաքացիական գործով* 2016 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ՝

---

[6] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

արձանագրելով հետևյալը. *«(…) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող Ծառայությունը՝ որպես պետական իշխանություն իրականացնող մարմին, կոչված է ապահովելու դատական ակտերի հարկադիր կատարումը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին, մասնավորապես՝ «Հրապարակային ապակարկությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով, իրականացվում է նաև գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացնելու միջոցով, այն է՝ ապակարկություններով վաճառելու և այն հետագայում իրացնելու միջոցով: Ընդ որում, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածների հիմքով անցկացվող ապակարկությունների, որտեղ որպես ապակարկությունների կազմակերպիչ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, որը գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից, գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի միջոցով իրացվելու դեպքում ապակարկությունները կազմակերպվում և անց են կացվում Ծառայության կողմից՝ դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթին համապատասխան: (…) տվյալ դեպքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հարկադիր կատարման վարույթում Ծառայությունը, կատարելով օրենքով սահմանված իր պարտականությունը, կազմակերպել և իրականացրել է բնակարանի հարկադիր էլեկտրոնային աճուրդը, իսկ վեճն առաջացել է Ծառայության կողմից իր հանրային իշխանական այդ լիազորություններն իրականացնելու կապակցությամբ: Հետևաբար կողմերի միջև ծագել են ոչ թե քաղաքացիական, այլ հանրային իրավահարաբերություններ»*[7]:

9.2. Վճռաբեկ դատարանը *Շուշանիկ Վարդանյանը, Թորոս Վարդանյանը և Արարատ Խառատյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության արդարադատության*

[7] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Դեզդեմոնա, Էդիկ, Գոհար, Սրեփան, Նունե, Հմայակ և Ալիսա Մանուկյաններն, Անահիտ Հարությունյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Մամիկոն Օհանյանի*՝ քաղաքացիական գործով 2016 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ԿԴ3/0174/02/14 որոշումը:

նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ 2022 թվականի հոկտեմբերի 07-ի որոշմամբ անդրադարձել է հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի քննության առանձնահատկություններին՝ արձանագրելով հետևյալը. *«(...) Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջով վիճելի իրավահարաբերությունն իր բնույթով հանրային է և ենթակա է վարչական դատավարության կարգով քննության, սակայն ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի հայցատեսակ, որը լիարժեք կարտացոլի նշված նյութահրավական պահանջի էությունը:*

Նման պայմաններում, հաշվի առնելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում դատավարական նորմերի անալոգիայի կիրառման արգելքի բացակայությունը, ինչպես նաև արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի քննության նկատմամբ առավել համահունչ է վիճարկման հայցի իրավակարգավորումների կիրառումը, քանի որ այս դեպքում գործ ունենք համասեռ հարաբերությունների հետ: Մասնավորապես՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջն իր բնույթով և դատական պաշտպանություն հայցող անձի հետապնդած նպատակով առավելապես նման է վիճարկման հայցի առարկային և բովանդակությանը, քանի որ երկու դեպքում էլ առաջնային իրավական հետևանքն անվավերությունն է: Հաշվի առնելով այն, որ ներկա իրավակարգավորումներով հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջն ուղղակիորեն չի համապատասխանում վարչական դատավարությունում առկա հայցատեսակներին, ինչը չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատարանի մատչելիության իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին, այդ թվում նաև՝ հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վարչադատավարական կարգով քննության և լուծման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առավել համահունչ և հավասարակշռված դատական պաշտպանության կառուցակարգը վիճարկման հայցի

կանոնների կիրառումն է հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի նկատմամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայիս իրավակարգավորումների պայմաններում իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառվեն վիճարկման հայցի կանոնները՝ ապահովելով դատական պաշտպանության իրավունքի և դրա իրացման համար անհրաժեշտ դատավարական ընթացակարգերի կիրառման արդյունավետությունը»:

9.3. Վճռաբեկ դատարանը *Սուսաննա Համբարձումյանն ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձինք Ելիզավետա Սարգսյանի, Աղասի Դանիելյանի, Անդրանիկ Դանիելյանի, «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության և «Ունիվերսալ Ավան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության*՝ 2022 թվականի մայիսի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) արձանագրություն ստորագրելու գործողությամբ ավարտվում է Ծառայության, որպես վարչական մարմնի, հանրային իշխանական լիազորությունների իրականացումը, ինչի արդյունքում աճուրդը հաղթած մասնակցի մոտ ծագում է լուրի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիր կնքելու իրավունք: Փաստացի՝ արձանագրությունը ստորագրելու իրողությամբ աճուրդն ավարտվում է՝ դադարեցնելով Ծառայության կողմից հանրային իշխանական լիազորությունների իրականացումը ևս: Արդյունքում Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ծառայության, և աճուրդը հաղթած մասնակցի միջև ծագում են մասնավոր՝ քաղաքացիաիրավական, իրավահարաբերություններ»*[8]:

10. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են

[8] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Սուսաննա Համբարձումյանն ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձինք Ելիզավետա Սարգսյանի, Աղասի Դանիելյանի, Անդրանիկ Դանիելյանի, «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության և «Ունիվերսալ Ավան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության*՝ վարչական գործով 2022 թվականի մայիսի 26-ի թիվ ՎԴ/9457/05/18 որոշումը:

հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Միաժամանակ, հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման գործընթացը Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից իրականացվող վարչարարություն է, որն ավարտվում է սակարկությունների արդյունքների մասին հաղթողի և կազմակերպչի կողմից արձանագրության ստորագրմամբ, որպիսի պահից աճուրդում հաղթող ճանաչված մասնակցին, ով ստորագրում է արձանագրությունը, անցնում է լոտի վերաբերյալ առուվաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը: Վերոգրյալից հետևում է, որ սակարկությունների արդյունքների մասին արձանագրություն ստորագրելու գործողությամբ եզրափակվում է, ամփոփվում է վարչական մարմնի՝ տվյալ դեպքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հանրային իշխանական լիազորությունների իրականացումը, այսինքն՝ վարչարարությունը:

Ընդ որում, հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառվում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցի կանոնները:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Հ.Ս.-ը, 2026 թվականի մայիսի 20-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և ՀՀ կադաստրի կոմիտեի՝ 2025 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և որպես հետևանք՝ 2025 թվականի դեկտեմբերի 23-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին[9],

- ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի մայիսի 27-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

[9] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ հիմնական հայցապահանջը՝ 2025 թվականի դեկտեմբերի 09-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին պահանջը, ընդդատյա չէ վարչական դատարանին, քանի որ առուվաճառքի պայմանագիրը, նույնիսկ եթե դրա կողմերից մեկը հանդես գա որպես հանրային իշխանության մարմին, ենթադրում է քաղաքացիաիրավական հարաբերություն, քանի որ հանրային իշխանության մարմինը նույնպես կարող է հանդես գալ քաղաքացիաիրավական հարաբերություններում և կնքել քաղաքացիաիրավական պայմանագրեր: Տվյալ դեպքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և գնորդի միջև եղել է ազատ կամահայտնություն, ինչը բացառվում է հանրային իրավահարաբերություններում[10],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի հունիսի 15-ի որոշմամբ գտել է, որ ներկայացված պահանջի փաստական հիմքերը, ըստ էության, վերաբերում են հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման իրավաչափության հարցին, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ վեճը վերաբերում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ որպես վարչական մարմնի հանրային իշխանական լիազորությունների իրականացմանը և բխում է հանրային իրավահարաբերություններից, այսինքն՝ հայցվորն ըստ էության ներկայացրել է ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վիճարկման հայց[11]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ սույն գործով ներկայացված հիմնական պահանջը վերաբերում է 2025 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելուն, իսկ հայցի փաստական հիմքում վկայակոչված հանգամանքներից հետևում է, որ հայցվորը վիճարկում է առուվաճառքի պայմանագրի կազմմանը նախորդող՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ էլեկտրոնային աճուրդի կազմակերպման և իրականացման կապակցությամբ ձեռնարկված գործողությունների իրավաչափությունը

[10] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[11] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

(օրինակ՝ աճուրդի, լոտի մեկնարկային գնի և վիճարկվող պայմանագրի մասին ծանուցված չլինելը, ծանուցումը զանգվածային լրատվության միջոցով և «www.azdarar.am» ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքով հրապարակված չլինելը, «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը ստացած չլինելը): Հետևաբար, սույն գործով վեճի ենթակայության հարցը քննարկելիս ՀՀ վարչական դատարանը ոչ միայն պետք է հիմք ընդուներ հայցապահանջի ձևակերպումը, այլև ի հիմնավորումն այդ հայցապահանջի՝ հայցադիմումում վկայակոչված փաստական հանգամանքները: Ավելին, ՀՀ վարչական դատարանը պարտավոր էր ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով իրեն վերապահված՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու լիազորության գործադրմամբ (հայցադիմումը վերադարձնելու կամ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո գործի նախապատրաստման փուլում մատնանշում կատարելու միջոցով) պարզել հայցվորի՝ դատական պաշտպանության դիմելու իրական մտադրությունը, մասնավորապես՝ հայցվորի նպատակն արդյո՞ք առուվաճառքի պայմանագրի, թե՝ հարկադիր կատարողի գործողությունների իրավաչափության վիճարկումն է: Միայն վերոնշյալ դատավարական գործողությունների կատարումից հետո ՀՀ վարչական դատարանը կարող էր եզրահանգում կատարել սույն գործով ներկայացված վեճի՝ հանրային կամ մասնավոր իրավահարաբերություններից բխելու, և ըստ այդմ՝ հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա լինել կամ չլինելու հարցը:

Վերոնշյալ եզրահանգումը հիմնավորվում է նաև Վճռաբեկ դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու սկզբունքի բովանդակության և դրա կենսագործման վերաբերյալ մի շարք որոշումներում արտահայտած դիրքորոշումներով[12]:

Այսպիսով, պարզ չէ՝ հայցվորը, դիմելով դատական պաշտպանության, մտադիր է եղել վիճարկելու կնքված առուվաճառքի պայմանագիրը, թե՝ հարկադիր կատարողի գործողությունների իրավաչափությունը, որպիսի պայմաններում հնարավոր չէ պարզել սույն գործով ներկայացված վեճի իրավական բնույթը:

---

[12] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հուլիսի 20-ի թիվ ՎԴ/0229/05/15 և 2017 թվականի մարտի 14-ի թիվ ՎԴ/3804/05/15 որոշումները:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում ենք, որ Հ.Ս.-ի հայցի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/8260/05/26 (ԵԴ2/6201/02/26) գործը պետք է ուղարկել ՀՀ վարչական դատարան:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/8260/05/26 (ԵԴ2/6201/02/26) գործն ըստ Հ.Ս.-ի հայցի ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և ՀՀ կադաստրի կոմիտեի՝ 2025 թվականի դեկտեմբերի 9-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և որպես հետևանք՝ 2025 թվականի դեկտեմբերի 23-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ուղարկել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ**	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ**
ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**	